ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 02 » հոկտեմբեր 2025թ. No 6019 - Ա

ՊԱԿԻՍՏԱՆԻ ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ NO 30, ՍԵԿՏՈՐ 28, ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ NO 30, ՍԵԿՏՈՐ 28, ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ, ՊԱԿԻՍՏԱՆ «ՖԵՄԻՈՆ ՏԱՏԱՇ ՓՌՎՈՂ, ՎԻՏԱՆԻԱ ՔՆԱԲԵՐ, ԿՈՃԱՊՂՊԵՂ ԴԵՂԱՏՈՒ, ՄՈՒԿՈՒՆԱ ԱՅՐՈՂ, ԾՆԵԲԵԿ ՀՈՒՐԱՆԱՎՈՐ, ՍԱՐԱԿԱ ՀՆԴԿԱԿԱՆ, ԿԱՏՎԱԽՈՏԻ ԿՈՃՂԱՐՄԱՏՆԵՐԸ ԱՐՄԱՏՆԵՐՈՎ, ՌԱՋԻՆԱ ՍՈՎՈՐԱԿԱՆ, ՀԱՄԵՄ ՑԱՆՈՎԻ, ՎԻՏԵՔՍ ՍՐԲԱԶԱՆ ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ 100ՄԳ+100ՄԳ+50ՄԳ+25ՄԳ+25ՄԳ+25ՄԳ+25ՄԳ+17ՄԳ+17ՄԳ+16ՄԳ; (20) ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ, (60) ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ» ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ Դեղերի գրանցման իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 3 հավելվածի 1-ին գլխի 2-րդ կետի՝ դեղի գրանցման համար անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթերի փաթեթ (դոսյե)՝ համաձայն ԱյՍիԷյչ համընդհանուր տեխնիկական փաստաթղթի:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Պակիստանի Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ,

Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի, Պակիստան «ՖԵՄԻՈՆ տատաշ փռվող, վիտանիա քնաբեր, կոճապղպեղ դեղատու, մուկունա այրող, ծնեբեկ հուրանավոր, սարակա հնդկական, կատվախոտի կոճղարմատները արմատներով, ռազինա սովորական, համեմ ցանովի, վիտեքս սրբազան դեղապատիճներ 100մգ+100մգ+50մգ+25մգ+25մգ+25մգ+25մգ+17մգ+17մգ+16մգ; (20) պլաստիկե սրվակ, (60) պլաստիկե սրվակ» դեղի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիմունքներով գրանցումը մերժելու մասին դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 23464 առ 16.09.2025թ. բացասական եզրակացության համաձայն հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 16-րդ հոդվածի 16-րդ մասը և նույն օրենքի նույն հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետը՝ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձաքննության ընթացքում հայտատուի կողմից չեն կատարվել թիվ EL/01/3607-24 առ 19.12.2024 թվականի և թիվ 01/4096-25 առ 21.08.2025 թվականի գրություններով ներկայացված պահանջները՝ թերի են համարվում փորձաքննության ընթացքում ներկայացված ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 3-ի 1-ին գլխի 2-րդ կետով սահմանված փաստաթղթերի փաթեթում (դոսյեում) ներառվող հետևյալ փաստաթղթերը՝

- ՄՈԴՈՒԼ 1. «Վարչական տեղեկություններ» բաժնի՝ 1.3.«Դեղի մասին տեղեկատվություն» ենթաբաժնի՝

1.3.2. «Փաթեթների, պիտակի գծապատկերներ» վերտառությամբ փաստաթուղթը,

- ՄՈԴՈՒԼ 3. «Որակ» բաժնի՝ 3.2.Բ. «Դեղ» ենթաբաժնի՝

3.2.Բ.1. «Դեղի նկարագրություն և բաղադրություն» վերտառությամբ փաստաթուղթը

3.2.Բ.5.2. «Անալիտիկ գործընթացներ» վերտառությամբ փաստաթուղթը:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Պակիստանի Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի, Պակիստան «ՖԵՄԻՈՆ տատաշ փռվող,

վիտանիա քնաբեր, կոճապղպեղ դեղատու, մուկունա այրող, ծնեբեկ հուրանավոր, սարակա հնդկական, կատվախոտի կոճղարմատները արմատներով, ռազինա սովորական, համեմ ցանովի, վիտեքս սրբազան դեղապատիճներ 100մգ+100մգ+50մգ+25մգ+25մգ+25մգ+25մգ+17մգ+17մգ+16մգ; (20) պլաստիկե սրվակ, (60) պլաստիկե սրվակ» դեղի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիմունքներով գրանցումը:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157